ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԻՄԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

ՆՊԱՏԱԿ

Factor TV-ի փաստերի ստուգման թիմը մի քանի մակարդակով ստուգում է սեփական հրապարակումների ճշմարտացիությունը և ճշգրտությունը մինչև հրապարակումը: Սակայն նույնիսկ այդ դեպքում սխալները և վրիպումները չեն բացառվում, և դրանք ուղղելու համար թիմը ներդնում է իր լավագույն ջանքերը: Սխալների ուղղման քաղաքականության նպատակն է լիարժեք ցույց տալ ճշմարտությունը և գործել թափանցիկ՝ պահպանելու համար լրատվամիջոցի նկատմամբ վստահությունը:

ՍԽԱԼՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Տեխնիկական վրիպակներ՝ սրանք այն դեպքերն են, երբ անհրաժեշտություն է առաջացել խմբագրական ուղղումներ անել, օրինակ՝ անուններ ու տեղանուններ ուղղել, կամ պարզեցնել ասելիքը՝ երկիմաստությունից խուսափելու համար:

Էական սխալներ՝ սրանք այն դեպքերն են, երբ

- Փաստեր ստուգողի սխալը կարող է փոխած լինել ամբողջ հրապարակման ասելիքը կամ իմաստը,
- Նոր ի հայտ եկած փաստերը կարող են փոխել ամբողջ հրապարակման ասելիքը/իմաստը կամ հաղորդել նոր շեշտադրումներ և լրացուցիչ իմաստներ:

Էական սխալների առկայության դեպքում փաստերի ստուգման թիմը և խմբագրությունը հանձնառություն են վերցնում ոչ միայն ուղղել սխալը, այլև դրա մասին հայտնել թափանցիկ: Այսպիսի դեպքերում բացառվում է հրապարակումներում լուռ փոփոխություններ անելը:

ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄԸ

Եթե սխալը կամ վրիպակը էական է, ապա նյութի մեջ կատարվում է փոփոխություն, որի արդյունքում սխալ պնդումը կամ տեքստի հատվածը կամ վիզուալ բովանդակությունը փոխվում է նոր, ճիշտ տեքստով կամ բովանդակությամբ, իսկ նյութի սկզբում կամ համապատասխան տեղում դրվում է ծանուցում, թե ինչ է փոխվել:

Եթե հրապարակումը արվել է պատկերի կամ տեսանյութի միջոցով, և դրանց մեջ փոփոխությունները տեխնիկապես անհնար են, ապա կայքում և սոցցանցերում պատկերի կամ տեսանյութի կից տեքստում դրվում է ծանուցում, թե ինչ սխալ է պարունակում հրապարակումը, տրվում է ճշտում կամ ճշգրտում:

Եթե սխալը կամ վրիպակը զգալիորեն փոխում է հրապարակման բովանդակությունը, ապա հրապարակման մեջ ուղղում անելուց բացի, թիմը կարող է լրացուցիչ հրապարակում անել՝ սխալ պնդումը հերքելու, ճշտված տեղեկությունը ներկայացնելու համար:

ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՀԱՁԱՆԳՈՒՄ

Factor TV-ի փաստերի ստուգման թիմի հրապարակումներում սխալներ կամ վրիպակներ տեսնելու դեպքում խնդրում ենք դրանց մասին հայտնել info@factor.am հասցեով կամ Factor TV-ի ֆեյսբուքյան էջին նամակների միջոցով, ինչպես նաև խմբագրության հեռախոսահամարով՝ + (374) 96 311 080:

Factor TV-ի փաստերի ստուգման թիմը պարտավորվում է հնարավորինս արագ արձագանքել և ուղղել սխալները, ինչպես նաև տրամադրել լրացուցիչ ծանուցումներ՝ ուղղումների մասին: